«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ

«Կամի Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Առաքելյանին
ՀՀ Ք. Երևան, Ա. Ահարոնյան 62/3

ՀՎՀՀ 00927968

ՇԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի Հ. Առաքելյան,

«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու), և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 03.02.2021թ կնքվել է սննդամթերքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել (այսուհետ՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **1 (մեկ)** օրից ավելի

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված բացասական եզրակացությունը որում որպես անհապատասխանություն նշվել է հետևյալը՝

«Կամի Գրուպ» ՍՊԸ-իկողմից պահանջագրերի համապատասխան ապրանքների մատակարարում չենք ունեցել ապրիլ ամսից

Հաշվի առնելով «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 03.02.2021թ կնքված **N ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2021/1-Ս)-2** պայմանագրի 2.1.7. կետի բ) ենթակետի , գտնում ենք, որ թույլ է տրվել Պայմանագրի պայմանների էական խախտում:

««Կամի Գրուպ» ՍՊԸ-ի» ՍՊ ընկերության կողմից չեն մատակարարվել ապրանքներ, խախտելով Պայմանագրի 2,4 կետը

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

Ուստի պայմանավորված վերոգրյալով գտնում ենք, որ ««Կամի Գրուպ» ՍՊԸ-ի» ՍՊ ընկերության կողմից թույլ է տրվել «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի և «Կամի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 03.10.2021 թվականին կնքված **N ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2021/1-Ս)-2** պայմանագրի էական պայմանների խախտում և պայմանավորված նշվածով 2021թվականի ապրիլ ամսից ապրանքներ չեն մատակարարվել նույն Պայմանագրի 2.1.7. կետի բ) ենթակետի 2.4.1.; 2.4.2. կետերի դրույթներին համապատասխան Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվում է 09.08.2021թվականից: Միևնույն ժամանակ Պայմանագրի 6.2. կետերի դրույթների համաձայն կիրառվել է 59174 (հիսունինը հազար մեկ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամի չափով տուգանք, որը պարտավոր եք վճարել Պայմանագրում նշված պատվիրատուի բանկային հաշվին 5 աշխատանաքային օրվա ընթացքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը տեղեկացվում է, որ «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ը՝

1. 09.08.2021թվականից միակողմանի լուծում է Պայմանագիրը,
2. Պայմանագրի 6.2. կետերի դրույթների համաձայն կիրառվել է 59174 (հիսունինը հազար մեկ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամի չափով տուգանք
3. Ձեռնարկում է Պայմանագրից և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ

Տնօրեն՝ Ա. Պետրոսյան